

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱԿԱՄԱՆՐԷԱՅԻՆ ԴԵՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱԿԱՄԱՆՐԷԱՅԻՆ ԴԵՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

«Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարությանը և հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարության 2015-2020 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունումը պայմանավորված է բժշկական ծառայությունների որակի, լաբորատոր ծառայությունների կարողությունների բարելավման և դեղերի ռացիոնալ կիրառումը խթանելու, վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ: Իրավական ակտի անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում հակամանրէային դեղերի կիրառումը չի վերահսկվում անասնաբուժության, գյուղատնտեսության, սննդի ոլորտներում, որը հակամանրէային դեղերի կայունության զարգացման հարցում լրացուցիչ գործոն է:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայում համաշխարհային առողջապահության համար լուրջ հիմնախնդիր է հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության զարգացումը: Դեղակայուն ձևերով վարակիչ հիվանդությունները ենթակա չեն ընդունված սխեմաներով

բուժման, արդյունքում երկարում է հիվանդության ընթացքը, դեղաբուժությունը դառնում է անարդյունավետ և մեծանում է անբարեհաջող ելքերի և բարդությունների թիվը: Եվրոպական տարածաշրջանի որոշ երկրներում հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության տարածվածության մակարդակը հասնում է 25% և 29 երկրների տվյալներով դեղակայուն ձևերով վարակների տարեկան 400 000 դեպքերից մահանում է 25000 մարդ: Իրականում հավանական է, որ այս տվյալներն ավելի բարձր են, քանի որ հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության պատճառով հետևանքների գրանցումն ու հաշվետվությունը լիարժեք չի իրականացվում:

Հայաստանի Հանրապետությունում դեղերի որակի ու անվտանգության ապահովման միջոցառումների շրջանակներում արդեն իսկ իրականացվում են հակամանրէային դեղերի շրջանառությանն ուղղված միջոցառումներ, սակայն առողջապահության, անասնաբուժության և սննդի արտադրության ոլորտներում հակամանրէային դեղերի լայնորեն կիրառումը պահանջում է միջգերատեսչական լայն համագործակցություն:

Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության զարգացման պատճառ է նաև Հայաստանի Հանրապետությունում գործող մանրէաբանական լաբորատորիաների ախտորոշման ցածր մակարդակը՝ պայմանավորված հակամանրէային դեղերի նկատմամբ զգայունության որոշման համար չափորոշիչների և ուղեցույցների բացակայությամբ: Լաբորատորիաներում չեն գործում հետազոտությունների որակի գնահատման կանոնավոր գործընթացներ: Լուրջ խնդիր է նաև բուժաշխատողների և հանրության շրջանում հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության մասին անբավարար տեղեկացվածությունը, ինչպես նաև բժիշկների կողմից հակամանրէային դեղերի նշանակումը՝ առանց հաշվի առնելու մանրէաբանական մշտադիտարկման արդյունքները:

Ստեղծված իրավիճակը նպաստում է նաև առողջապահական ծախսերի չնախատեսված մեծացմանը: Անհրաժեշտություն է առաջանում կիրառել ավելի նոր սերնդի, թանկարժեք հակամանրէային դեղեր, պահանջվում է ավելի երկարատև բուժում՝ մեծամասամբ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող

կազմակերպություններում, սրանք էլ պայմանավորում են ինչպես առանձին ընտանիքների, այնպես էլ ողջ հասարակության առողջապահական ծախսերի բեռի ծանրացումը: Հաշվարկված է, որ Եվրամիությունում բազմադեղակայուն մանրէների հետևանքով տարեկան տնտեսական կորուստը կազմում է 1,5 միլիարդ եվրո:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Որպես հիմնախնդրի լուծում, առողջապահության նախարարությունը մշակել է և ներդնելու է հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման միջոցառումների ռազմավարական ծրագիրը, որը ներառում է միջոցառումներ՝ ուղղված նոր կայուն մանրէների առաջացման, մարդկանց և կենդանիների շրջանում առկա դեղակայուն մանրէների տարածման կանխարգելմանը և դեղակայուն ձևերով վարակների բեռի նվազեցմանը:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

«Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարությանը և հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարության 2015-2020 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունման նպատակն է կանոնակարգել հակամանրէային դեղերի շրջանառությունը և պատշաճ օգտագործումը, մշակել հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության համաճարակաբանական հսկողության համակարգ, իրականացնել իրազեկման և կրթական լայնածավալ միջոցառումներ:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարությանը և հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարության 2015-2020 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի կողմից՝

Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանի գրասենյակի փորձագետների մեթոդական աջակցությամբ:

5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Իրավական ակտի ընդունման արդյունքում ակնկալվող արդյունքներն են.

- 1) Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության և հակամանրէային դեղերի սպառման կարգավորմանն ուղղված կառավարման համակարգի ստեղծում:
- 2) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության համաճարաբանական հսկողության համակարգի գործադրում:
- 3) Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելման և հակամանրէային դեղերի պատշաճ օգտագործման վերաբերյալ ազգաբնակչության, առողջապահության, անասնաբուժության ոլորտի մասնագետների իրազեկության բարձրացում:
- 4) Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառության կարգավորման օրենսդրական դաշտի կարգավորում և իրավական ակտերի ընդունում:
- 5) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում հակամանրէային դեղերի նշանակման, բացթողման, ինչպես նաև կենսաշղթայի բոլոր օղակներում դեղերի որակի ապահովման և վերահսկողության գործընթացի կարգավորում:
- 6) Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելման և հակամանրէային դեղերի պատշաճ օգտագործման վերաբերյալ, միջազգային մոտեցումների և ԱՀԿ-ի մեթոդական առաջարկությունների համապատասխան ուղեցույց/ների որդեգրում:
- 7) Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության և զգայնության լաբորատոր հետազոտման վերաբերյալ՝ միջազգային մոտեցումների և ԱՀԿ-ի մեթոդական առաջարկությունների համապատասխան մեթոդաբանություն որդեգրում:

- 8) Հակամանրեային դեղերի նկատմամբ կայունության հսկողության ռեֆերենս լաբորատոր կենտրոնի գործադրում:
- 9) Անասնաբուծության ոլորտում կերային հավելումների (հակաբիոտիկների) օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանող իրավական ակտի ընդունում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ